ծանօթ լինել չէր կարող, ի հարկէ, ձեռագիրների մէջ թաղուած մեր միջնադարեան բանաստեղծութիւնը, որ տասնամեակներ յետոյ միայն, մեր օրերում, լոյս աշխարհ հանուեց փոշիների տակից, եւ որը ինքնին պերճախօս հերքումն է հայ դրականութեան մասին Բ.ի կազմած միակողմանի կարծիքի: Վերջապէս մոռնալու չէր եւ մեր հին ու միջնադարեան կրօնական բանաստեղծութիւնը, ինչպէս նաեւ մեր ժողովրդական հին բանահիւսութեան հետքերը հայ մատենագրութեան մէջ:

Սրան բնաւ չէ հակասում եւ ճշմարտութիւնը Բ.ի այն խօսքի, թէ «հայերը ունին սուր միտք եւ լաւ յիշողութիւն, ուստի եւ վերին աստիճանի հեշտութեամբ են սովորում օտար լեզուներ»:

Այս կապակցութեան մէջ անհետաքրքիր չէ այն զուգակշիռը, որ Բ. անում է հայերի եւ կովկասեան միւս ցեղերի ու մասնաւորապէս վրացիների միջեւ:

«Ես առիթներ եմ ունեցել— ասում է նա («Կովկ. ժող.», էջ 55) — երկար ժամանակ հետեւելու կովկասեան տարբեր ցեղերին պատկանող պատանիների ուսման ընթացքին եւ դիտել եմ ամէն տեղ, որ լեզուներ ու գիտութիւններ սովորելում, ինչպէս նաեւ իրենց մտքերը գրաւոր կերպով արտայայտելու մէջ հայերը, ընդհանուր առումով, ամենից աւելի ընդունակութիւններ են յայտնաբերում, իսկ վրացիները՝ ամենից պակաս: Հակառակ հայերի արթնամիտ, կայտառ եւ խորամանկ բնաւորութեան՝ վրացիները ցուցահանում են ծուլութիւն: Նրանք օրով են ապրում, անհոգ են, մեծ արժէք չեն տալիս երկրային բարիքներին, անփոյթ են իրենց ստացուածքի հանդէպ: Դրա համար երկրի առեւտուրը գտնւում է հայերի ձեռքին: Բայց դրա փոխարէն՝ վրացիները աշխարհիս ամենաազնիւ եւ քաջ ժողովուրդն են: Ինչպէս, առհասարակ Կովկասի բոլոր ժողովուրդները՝ վրացիք էլ հիւրասէր են: Վստահելի են իրենց սուրի նման, աշխոյժ եւ կայտառ՝ սեփական նժոյգների պէս: Քաջ են կռուի դաշտում եւ բարեկամասէր՝ տանը»:

Հետաքրքրական է լսել Բոդենշտէդտին եւ այն մասին, թէ ի՛նչ ազդեցութիւն են ունեցել հայերի վրայ պարսիկ եւ տաճիկ ցեղերը:

Հայի ազգային նկարագրի ամենէն յոռի գծերը Բոդենշտէդտ համարում է պարսիկների դարաւոր տիրապետութեան ժառանգութիւն: «Հայաստանի ամենաուժեղ եւ ամենամնասակար թշնամին,— ասում է Բ. («Կովկ. Ժող.», 155),— որ ոչ միայն նրա քաղաքական անկումը առաջ բերաւ, այլ եւ իր վնասակար, բարոյազրկող տեւական ազդեցութիւնը ունեցաւ հայ ժողովրդի վրայ,— դա ի բնէ անտի դրացի Պարսկաստանն է եղած: Նորագոյն ժամանակներում այդ դերը իր վրայ է առել Ռուսաստանը ու հաւատարմօրէն շարունակել այն, պարսկական իմաստով»:

Բոդենշտէդտ այդպէս խիստ չէ արտայայտւում տաճկական ազդեցութեան մասին: Դա էլ ունեցել է իր պատմական պատճառները, որոնց վրայ կանգ առնել չենք կարող: Այսչափը ասենք, որ այդ խնդրի մասին մօտաւորապէս նոյնն է եղած նաեւ Խաչատուր Աբովեանի տեսակէտը, որ եւ արտայայտուած ենք գտնում նրա «Վէրք Հայաստանի»ի մէջ:

Աբովեանից առած լուսաբանութիւնները եւս, նոյն այդ խնդրի մասին, անտարակոյս ունեցել են իրենց որոշ ազդեցութիւնը Բոդենշտէդտի վրայ:

Արարատեան աշխարհը այն ժամանակ Պարսկաստանից նոր էր անցել ռուսների ձեռքը, որոնք եւ միւս կողմից սրում էին հայ-պարսկական յարաբերութիւնները: Վերջապէս, պատմական ճշմարտութիւն է այն, որ մէկ դար մեզնից առաջ պարսկահայ հատուածը ամէն տեսակէտից աւելի ճնշուած էր, քան տաճկահայ հատուածը: Մասամբ դրանով պէտք է բացատրել եւ այն փաստը, որ հայութեան քաղաքական զարթօնքը սկզբնապէս պարսկական իրականութիւնից է բխել:

Բոդենշտէդտի աչքին է զարկել այն կենցաղային տարբերութիւնը, որ հայ ժողովուրդի վրայ արել են մի կողմից պարսիկները, իսկ միւս կողմից տաճիկները:

Այդ տարբերութիւնը նկատել է նա Ախալցխայի եւ Ախալքալաքի շրջանը կատարած շրջագայութեան միջոցին:

«Երեւանի կողմերը — ասում է նա — ես պարսիկների դարաւոր դաժան տիրապետութեան հետքերը միայն տեսայ: Այնտեղ հայ ժողովուրդը պահել է իր ազգային տարազը եւ սովորութիւնները: Երեւանի հայերը ոչնչ-